ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
«ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

ք. Բյուրեղավան Հեռ. (+374 222) 6-52 53; 6 52 49, էլ.փոստ www.byureghavanpoliclinic@mail.ru

20 մայիսի 2024թ № 100

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Հարգելի պարոն Բալասյան

Լաբորատոր նոր սարքավորումների ձեռք բերման, ընդհանուր հետազոտությունների քանակների ավելացման արդյունքում մեծացել է լաբորատորիայի աշխատանքների ծավալը և աշխատանքների լիարժեք կազմակերպման համար պահանջվում է առավել շատ ժամանակ:

Իմունոկանխարգելման գործընթացին ներկայացվող պահանջների, աշխատանքների կազմակերպման ծավալների կտրուկ մեծացման անհրաժեշտությունից ելնելով (սուր վարակիչ կառավարելի և ոչ կառավարելի ինֆեկցիոն հիվանդությունների աճ, տարիքային բոլոր խմբերի ներգրավվածություն պատվաստումներին) նույնպես անհրաժեշտություն է առաջացել աշխատաժամանակի փոփոխության:

Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի №84-Ա որոշման 5-րդ հավելվածով հաստատվել է «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ 2024 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, ըստ որի լաբորատոր-գործիքային ծառայությունների կլինիկական և բիոքիմիական լաբորատորիայի «Բժիշկ-լաբորանտ» և «Բուժակ-լաբորանտ» հաստիքային միավորների դրույքը սահմանված է 0,75, իսկ «Իմունոկանխարգելման կաբինետի բուժքույր» հաստիքային միավորի դրույքը սահմանված է 0,25:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ 2024 թվականի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ.

1) «Բժիշկ-լաբորանտ» 1 հաստիքային միավորի համար սահմանել 1.0 դրույք, դրույքաչափը 210.600 ՀՀ դրամ,
2) «Բուժակ-լաբորանտ» 1 հաստիքային միավորի համար սահմանել 1.0 դրույք, դրույքաչափը 136.500 ՀՀ դրամ,

3) «Իմունոկանխարգելման կաբինետի բուժքույր» հաստիքային միավորի համար սահմանել 1.0 դրույք, դրույքաչափը 75.000 ՀՀ դրամ նվազագույն աշխատավարձ չներառված վճարվող հարկերը և պարտադիր այլ վճարները:

Խնդրում եմ հաստատել:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA CLOSED JOINT-STOCK COMPANY
03510802
«ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ԲԱՂ.ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»
«ЮРЕГАВАНСКАЯ ГОР.ПОЛИКЛИНИКА ИМЕНИ АНДРАНИКА ПЕТРОСЯНА»
"BYUREGHAVAN MUN.POLICLINIC NAMED AFTER ANDRANIK PETROSYAN"